

թեանն. նոյնպէս եւ մնացեալքն անդէն առ նմա աւագանին Յայոց յետս կացեալ՝ ընդ նմա ապստամբեցին, եւ դարձուցեալ զերեսս իւրեանց ի ճանապարհէն արդարութեան՝ մոլորեցան զկնի սատանայի. դեսպան արձակեցին ի Պարսս եւ նամակաւ¹ ուխտադրեցին ընդ նոսա. եւ զբերդեան ամրոցացն Յայոց ի բաց կալան, եւ զիւրեանցն բերդակալս արարեալ՝ զգուշացուցին: 2 Եւ զորդիս տոհմին Մամիկոնէից եւ Կամսարականաց եւ զայլոց տանուտերացն ժողովեալ յիրաքանչիւր² դայեկաց՝ յամուրս բերդից³ իշխանութեանն Սիւնեաց ետ անցուցանել, եւ հրամայեաց պահել զամուրսն զգուշութեամբ. եւ ապա նենգաւորն⁴ Վասակ տայ տանել զտղայսն առ թագաւորն Պարսից: 3 Եւ որք խտորեցան զկնի սատանայի ընդ ուխտանենգին Վասակայ՝ են այսոքիկ. իշխանն Բագրատունեաց՝ Տիրոց, իշխանն Խորխոռունեաց՝ Գահիշոյ, իշխանն Ապահունեաց՝ Մանէճ, իշխանն Վահեունեաց՝ Գիւտ, իշխանն Պալունեաց՝ Վարազշապուհն⁵, իշխանն Աբեղէնից՝ Արտէն⁶, իշխանն Ուրծայ՝ Ներսէհ⁷, եւ այլք յոստանկաց եւ սեպուհք⁸ ոմանք յիրաքանչիւր տոհմէ»:

4 Եւ լուեալ զայս ամենայն գործ աղետից, զոր էր գործեալ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ եւ այլ նախարարացն որ ընդ նմա, երանելոյ սպարապետին Յայոց տեառն Մամիկոնէից Վարդանայ, հանդերձ նախարարաւքն եւ զաւրուն որ ընդ նմայն էին՝ չտրտմել ոչ կարէին. եւ զանձինս եւ զգերեալ տղայսն ի պահպանութիւն ամենահնար աջոյն յանձն արարեալ նուիրէին, ասելով այսպէս. «Ահա առեալ հեծանոց ի ձեռն Փրկիչն ամենեցուն Քրիստոս՝ սրբել զկալ իւր եւ ընտրել⁹ զցորենահատն, ժողովել յերկնից ի շտեմարանսն, եւ զյարդն մատնել անշէշ բոցոյն կիզուց անխնայ: 5 Եւ եղիցուք մեք սրբեալք ցորենահատ, եւ ցանկութեամբ սպասեսցուք աւուր նահատակութեան մերոյ, յորում թէ արժանի եղեալ դիպեսցուք մասին սրբոցն՝ վախճան մեր բարի զմեզ պսակէ, եւ զտղայս պահպանեալ սնուցանէ եւ ի տեղիս իւրաքանչիւր եւ յիշխանութիւն ածեալ հասուցանէ, եւ զարբանեակսն սատանայի բազում զոջմամբք ամաչեցուցեալ նշաւակէ աստ եւ ի հանդերձելումն»:

1 Գտ. ի Պարսս. նամակօք

2 Զ. իւրաքանչիւր

3 ԶԱտ. յամուր բերդից

4 Զ. պահել *մուրսն զգուշութեամբ, եւ *պա նենգաւորն

5 Զ. վարշապուհն

6 Զ. արմէն

7 Գտ. ներսէհ

8 Զ. սեպուհուք

9 ԶԱտ. ընդրել